

26. 825

336

1933

2
K
A 53

05 JAN 2010

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1933 թ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ

(Կազմված է ԽՍՀՄ-ի Կենտրոնական և Ժողովրդական 1933 թ. մայիսի 25-ի վորոշմամբ հաստատված «Գյուղատնտեսական հարկի կանոնադրությամբ», ԱՍՖԽ Հանրապետությունների Ժողովրդների նույն թվի հունիսի 7-ի և ՀՍԽՀ-ի Ժողովրդների հունիսի 9-ի վորոշումների «1933 թ. գյուղատնտեսական հարկի կիրառման կարգի մասին» հիման վրա) :

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ ԽՍՀՄ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

1933

ՖԵՐԵՎԱՆ

336
4-21

17 MAY 2013

26.825

336

4-21

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1933 ԹՎԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ

ՀԱՏՎԱԾ 1-ԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Գյուղատնտեսական հարկի յենթակա են՝
 - ա) կոլեկտիվ տնտեսությունները (գյուղատնտեսական կոմունաներ, գյուղատնտեսական արտելներ և հողը միատեղ մշակող ընկերություններ) .
 - բ) կոլտնտեսականների տնտեսության չհանրայնացված մասը .
 - գ) անհատական գյուղացիական տնտեսություններ .
2. Խառն արդյունա-գյուղատնտեսական այն արտելները, փոքր մասում են արդյունաբերական կոոպերացիայի ցանցի մեջ, յենթակա են գյուղատնտեսական հարկի իրենց ամբողջ յեկամուսների համեմատ, յեթե նրանց գյուղական տնտեսությունը հանրայնացրած է փոշ պակաս չափով, քան տվյալ շրջանի գյուղատնտեսական կոլեկտիվ տնտեսություններում :
3. Գյուղատնտեսական հարկի հարկային տարին սահմանվում է 1933 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ :

ՀԱՏՎԱԾ 2-ՐԴ

ԿՈՆԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

4. Յուրաքանչյուր կոլեկտիվ տնտեսության հարկը հաշվվում է Շրջագործկոմի կողմից սահմանված 1933 թ.

գարնանացանի պլանի, հաշվառած աշնանացանքի և բազմամյա տնկարանների (այգիների, պտղատու տնկարաններ և այլն) տարածության ինչպես և վոչ-գյուղատնտեսական ձեռնարկությունների յեկամուտների համեմատ:

Պլանից ավելի կատարած ցանքերի տարածությունը հարկման յենթակա չէ:

5. Կոլեկտիվ տնտեսության հարկը հաշվելու համար սահմանված են ամեն մեկ հեկտար մշակույթի նրկատմամբ հարկի հետևյալ միջին դրույքները ըստ առանձին շրջանների:

Տես տախտակ № 1

Յերկարամազ կտավհատի, բամբակի և այլ ցանքերը, վորոնք թված չեն բերված տախտակում, հարկվում են հատիկային ցանքերի համար սահմանված դրույքներով, ըստ վորում կիրառվում են այն արտոնությունները, վորոնք նախատեսանված են 12-18-րդ հոդվածներում (չաքարի ճակնդեղի ազատումը և այլն):

Ծանոթություն.— Բամբակի ցանքերը հարկվում են հատիկային ցանքերի համար սահմանված հանրապետական միջին դրույքով—2 ո. 50 կոպ. յուրաքանչյուր հեկտարից:

6. Առանձին դեպքերում չրջանային Գործադիր Կոմիտեներին իրավունք է վերապահվում Ժողկոմխորհի թույլատվությամբ սահմանել վորոչ գյուղխորհուրդների համար տարբեր դրույքներ:

Ծանոթություն.— Առանձին գյուղխորհուրդների համար տարբեր դրույքներ սահմանելու մասին միջնորդությունները հարուցվում են ՀՍՍՀ-ի Ֆինսոցկոմատի միջոցով:

7. Կոլեկտիվ տնտեսության վոչ-գյուղատնտեսական յեկամուտներից հարկը հաշվարկվում է յեկամուտի ընդհանուր գումարի համեմատ, ըստ վորում նա-

խապես դուրս են հանվում արտադրական բոլոր ծախքերը:

Վոչ գյուղատնտեսական յեկամուտների յուրաքանչյուր մեկ ուրբուց կոմունաները և արտելները վճարում են 3,5 կոպեկ, իսկ հողը միատեղ մշակող ընկերությունները 5 կոպեկ:

Ծանոթություն.— Գյուղհարկի յենթակա չեն ձկնորսությունից ստացած բոլոր այն յեկամուտները, վորոնք հարկվում են միատնական ձկնորսական հարկով:


8. Բացի գյուղատնտեսական հարկից կոլտնտեսությունները ուրիշ վոչ մի հարկի յենթակա չեն բացառությամբ՝ ա) չրջանառության հարկից՝ այն ձեռնարկությունների և զբաղմունքների համար, վորոնք հարկվում են չրջանառության հարկի որենքի համաձայն, բ) ջրային տուրքից՝ ջրովի հողագործության չրջաններում:

ԿՈՆՏԵՆՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԵՐԳԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Առաջավոր այն կոլեկտիվ տնտեսությունները, վորոնք գործնականում կատարել և գերակատարել են բերքատվության բարձրացման պլանը, որինակելի ձևով են դրել հաշվառումն ու հաշվետվությունը ստանում են մինչ 25 տոկոս զեղչ հաշվարկված հարկի դրույքից:

Այդ գումարները հատկացվում են տվյալ կոլտնտեսության մեջ հատուկ ֆոնդ կազմակերպելու և այն լավագույն բրիգադներին և առանձին կոլտնտեսական հարվածայիններին պարգևատրելու համար, վորոնք ապահովել են բերքատվության բարձրացումը և որինակելի ձևով դրել հաշվառումն ու հաշվետվությունը:

10. Հարկից ազատվում են բոլոր տեսակի մշակույթների սերմարուծարաններին հատկացրած տարածությունները:



**ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՅԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԵԱ-
ԿՈՒՅԹՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ**

11. Շաքարի ճախդեղի ցանքերը լրիվ ազատվում են հարկից:

12. Յերկարամազ կտավհատի ցանքերը յերեքնուկի և աշնանը վարած խամ հողերի վրա ազատվում են հարկից: Յերկարամազ կտավհատի մնացած ցանքերը հարկվում են արտոնված կարգով, այն է՝ հատիկային մշակույթների դրույքներով:

13. Կանեփի ցանքերը հարկվում են արտոնված դրույքով, այն է հատիկային մշակույթի կես դրույքի չափով:

14. Զրովի հողագործական շրջաններում դեմի (անջրդի) հողերի վրա յեղած բամբակի ցանքերը ազատվում են հարկից: Բամբակի մյուս ցանքերը հարկվում են արտոնված դրույքով, այն է հատիկային մշակույթների դրույքով:

15. Կենաֆի, քյանդիրի, ոսմիի, կանառնիկի, հարավային կանեփի և լյուֆայի ցանքերը լրիվ ազատվում են հարկից:

16. Կոնտրակտացիայի հիմունքներով ցանված յեթերա-յուղային և դեղային-տեխնիքական մշակույթները (բույսերը), ազատվում են հարկից:

**ԿԵՆՊԱՆԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ, ԹՈՇՆԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԵՂՎԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՈԼ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

17. Կենդանարուծության, կաթնատնտեսության, թռչնարուծության և մեղվաբուծության զարգացման նպատակով կոլտնտեսություններին տրվում են հետևյալ արտոնություններն՝

ա) գյուղհարկի յենթակա չեն ամեն տեսակի անասունները:

բ) գյուղհարկի յենթակա չեն թռչնարուծությունը, ճագարարուծությունը և մեղվաբուծությունը:

գ) այն կոլտնտեսություններում, վորտեղ կան ապրանքային ֆերմաներ, հարկի յենթակա չեն կերի մշակույթներով բուսված տարածությունները, վորոնց բերքը հանձնվում են ապրանքային ֆերմաներին: Այդ ֆերմաների ձեռնարկություններից ստացվող վոչ-գյուղատնտեսական յեկամուտները նույնպես յենթակա չեն գյուղհարկի:

**ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԵՏԱԳԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ**

18. Գյուղատնտեսական մթերքների վաճառքից (կոլտնտեսական շուկաներում, կրպակներից և այլն) ստացված յեկամուտներն ազատվում են հարկից:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՎՈՐՈՆՑ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՒԾ ԵՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ, ԶԲԱՆԾԱՆՆԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ ԱՆՁԻՆԲՆԱԽԿԻՆ ԿԱՐՄԻ ԳՎԱՐԴԻԱԿԱՆՆԵՐ ՅԵՎ ԿԱՐՄԻ ՊԱՐՏԻՋԱՆՆԵՐ, ԱԾԽԱՑԱՆԲԻ ՀԵՐՈՍՆԵՐ, ՈԱԶՄԱԿԱՆԱՑՎԱԾ ՊԱՋԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԱԾԽԱՏՈՂՆԵՐ, ՀԱԾՄՆԴԱՄՆԵՐ ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԿՈՒԼԱԿՆԵՐԻ ՎՐԵԺԽՆԴՐՈՒ ԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ ՅԵՎ ԱՅԼՆ

19. Կոլեկտիվ տնտեսության հաշվարկված հարկից հանվում է այն մասը, վորը բաժին է ընկնում կոլտնտեսության հետևյալ անդամներին՝

ա) ԽՍՀՄ-ի շքանշաններով կամ պատվավոր հեղափոխական ղեկավար պարգևատրվածներին և աշխատանքի հերոսներին:

բ) կադրային, չարային և կրտսեր պետկազմի ղեկավորականներին, վորոնք գտնվում են ժամկետավոր (անընդհատ) կամ դերադետիկ ծառայության մեջ, հաշվելով նաև 1933 թ. աշնանը զորակոչվածներին:

գ) ԲԳԿԲ-ի կադրային և պահեստի (ռեզերվ) հրամկազմի միջին, ավագ և բարձր ղեկավորականներին:

դ) նախադրարակոչային կամ արտադրարային պարապմունքները անցկացնելու համար վորպես հրահանգիչներ, կամ իրենց համար սահմանված հավաքների կոչված՝ յերկրային մասերի փոփոխական կազմում, յերկարատե արձակուրդում և պահեստում գտնվող միջին, ավագ և բարձր պետկազմին պատկանող անձանց:

յե) կրտսեր պետկազմի ղինվորականներին, վորոնք յերկարատե արձակուրդից փոխադրված են յերկրային մասերի փոփոխական կազմի մեջ.

զ) նախկին կարմիր գվարդիականներին և կարմիր պարտիզաններին.

ը) Միլիցիայի և ուղղիչ աշխատավորական հիմնարկների վարչատնտեսական ու ոպերատիվ շարային կազմին պատկանող անձանց.

թ) ռազմականացված պահակներում ծառայող անձանց.

ժ) հաշմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ խմբերին պատկանող պատերազմի և աշխատանքի հաշմանդամներին.

ի) գյուղի սոցիալիստական վերակառուցման և հանրային սեփականության պահպանման պայքարում կուլակային վրեժխնդրությունից տուժած գյուղական ակտիվիստների ընտանիքներին.

լ) պետական գույքի պահպանման համար իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ կամ այդ պարտականությունների կատարման հետևանքով սպանված անտառային աշխատողների ընտանիքներին.

խ) մանկատներից կուլտնտեսություն ընդունած անձերին և բացարձակ վորք յերեխաներին.

Ծանոթութուն.—«բ» և «գ» կետերում թված արտոնությունները կիրառվում են նաև այն զինվորականների նկատմամբ, վորոնք ստացել են յերկարատե արձակուրդ—փոխադրվել են պահեստի մեջ, կամ բոլորովին ազատվել են ծառայությունից 1933 թ. հունվարի 1-ից հետո:

20. Պլանային կարգով նոր վայրեր տեղափոխվող կուլտնտեսություններն ստանում են հետևյալ արտոնությունները՝

ա) այն կուլտնտեսությունները, վորոնք տեղափոխվել են այնպիսի վայրեր, վորտեղ պահանջվում է կոճղահատություն և՛ այլ մեխորատիվ աշխատանքների միջոցով հողը մշակելի դարձնել, տեղափոխվելուց հետո 6 տարի շարունակ ազատվում են հարկից:

բ) այն կուլտնտեսությունները, վորոնք տեղափոխվել են այնպիսի վայրեր, վորտեղ պահանջվում է խամ հողերի մշակում, տեղափոխվելուց հետո 4 տարի շարունակ ազատվում են հարկից.

գ) այն կուլտնտեսությունները, վորոնք տեղափոխվել են այնպիսի վայրեր, վորտեղ չի պահանջվում խամ հողերի մշակում, տեղափոխվելուց հետո 3 տարի շարունակ ազատվում են հարկից:

դ) այն կուլտնտեսությունները, վորոնք տեղափոխվել են Կարելիայի ԱՍՅՀ-ն և Մուրմանի գավառը, 15 տարի շարունակ ազատվում են հարկից:

յե) այն կուլտնտեսությունները, վորոնք տեղափոխվել են Հեռավոր Արևելքի յերկիրը 15 տարի շարունակ լրիվ ազատվում են հարկից:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ՏՈՒԺԱՄ ԿՈՆՏՆԵՍՏԱՆԻԹՅՈՒՆՆԵՐԻՆ

21. Տարրերային աղետներից տուժած կուլեկտիվ տնտեսությունները ազատվում են հարկից լրիվ կամ մասնակի չափով շրջանային հարկային հանձնաժողովների կողմից, կուլտնտեսության կրած վնասի համեմատ:

ԿՈՆՏՆԵՍՏԱՆԻԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՅԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

22. Կուլեկտիվ տնտեսությունների հարկի հաշ-

վարկը կատարում են չըջանային ֆինրաժինները: Գյուղատնտեսական յեկամուտների վրա ընկնող հարկի մասին ծանուցումները հանձնվում են կոլտնտեսութունների վարչութիւններին 1933 թ. ոգոստոսի 1-ից վոչ ուշ: Վոչ-գյուղատնտեսական յեկամուտների վրա ընկնող հարկի հաշվարկը չըջանային ֆինրաժինները կատարում են կոլտնտեսութիւնների տարեկան հաշվետվութիւններին հիման վրա 1934 թ. փետրվարին:

23. Հարկը վճարվում է հետևյալ ժամկետներում՝

24. Կոլեկտիվ տնտեսութիւնների գյուղատնտեսական յեկամուտներից հաշվարկված հարկի վճարման համար սահմանվում են հետևյալ ժամկետները՝

ա) Լեռնային և նախալեռնային չըջաններում առաջին ժամկետ՝ մինչև հոկտեմբերի մեկը, պետք է մուծվի հարկի 50 տոկոսը:

Յերկրորդ ժամկետ, մինչև նոյեմբերի 1-ը պետք է մուծվի հարկի մնացած 50 տոկոսը:

բ) Դաշտային (բամբակագործական և խաղողագործական) չըջաններում առաջին ժամկետ, մինչև հոկտեմբերի 15-ը պետք է մուծվի հարկի 50 տոկոսը: Յերկրորդ ժամկետ, մինչև նոյեմբերի 15-ը պետք է մուծվի հարկի մնացած 50 տոկոսը:

Կոլեկտիվ տնտեսութիւնների վոչ-գյուղատնտեսական յեկամուտներից պահանջվող գյուղհարկը հաշվարկվում և մուծվում է 1934 թ. մարտի 15-ից վոչ ուշ:

ՀԱՏՎԱԾ 3-րդ

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՆՐԱՅՆԱՅՎԱԾ ՄԱՍԻ ՀԱՐԿՈՒՄԸ

Ա) ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐԿԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

25. Զհանրայնացված յեկամուտներ չունեցող կոլտնտեսականները լրիվ ազատվում են հարկից:

26. Կոլտնտեսականների չհանրայնացված յեկամուտներից (դաշտամշակութիւնից, մարգագործու-

թիւնից, գյուղատնտեսական հատուկ ճյուղերից, արհեստավարական ու անայնագործական գրադմունքներից, այլ վոչ վարձու, վոչ-գյուղատնտեսական յեկամուտներից) հարկը գանձվում է կայուն դրույքներով:

Ըստ չըջանների սահմանվում են հետևյալ կայուն դրույքները:

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐԿԻ ԿԱՅՈՒՆ ԴՐՈՒՅՔՆԵՐԸ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ

Շըջանների անունները	Հարկի կայուն դրույքները ոււրլիներով
Ապարան, Վեդի, Ղափան, Փաշալու, Մարտունի, Ն. Բալազեա	15
Աղբաբա, Ալահվերդի, Արթիկ, Բասարզե, Զաք, Դորխա, Դիլիջան, Իջևան, Բեշլիջքենդ, Ղուրդուղուլի, Մեղրի, Թալին, Շամշադին, Սիսյան	20
Ախտա, Աշտարակ, Վաղարշապատ, Ղարաքիլիսա, Կոտայք, Լենինական	25
Ղամարլու, Ստեփանավան	30

27. Այն կոլտնտեսականներին, վորոնք ունեն 2 անաշխատունակ անդամ, հարկից զեղչ է տրվում 5 տոկոսի չափով, 3 անաշխատունակ անդամ ունեցողներին՝ 10 տոկոս զեղչ, իսկ 4 և ավելի անաշխատունակ անդամներ ունեցողներին 15 տոկոս:

Անաշխատունակ են համարվում՝

ա) բացարձակ հաշմանդամները:

բ) մինչ 16 տարեկան հասակ ունեցողները:

գ) 60 տարեկանից վեր տղամարդիկ և 55 տարեկանից վեր կանայք:

Ծանոթություն 1.—Վարձու աշխատանքից ստացված յեկամուտները գյուղհարկի յենթակա

չեն, պատշաճ դեպքերում հարկվում են յեկամտահարկով:

Ծանոթություն 2-րդ.— Վորսորդական ըզբաղմունքների յեկամուտները յենթակա յեն գյուղհարկի միայն այն շրջաններում, վորտեղ այդ զբաղմունքը արդյունաբերական զարգացման է հասել:

Ծանոթություն 3-րդ.— Ձկնորսությունից ստացվող յեկամուտները յենթարկվում են հարկի միայն այն տնտեսություններում, վորոնք իրենց վորսը կոնտրակտացիայի հիմունքներով չեն հանձնում պետական ձկնարդյունաբերական ձեռնարկություններին կամ կոոպերատիվ կազմակերպություններին:

Բ. ԿՈՆՏԵՆՏԱԿԱՆՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

28. Կոլտնտեսականների չհանրայնացված յեկամուտները հարկելիս, հաշվի չեն առնվում կոլտնտեսությունից ստացած նրանց յեկամուտները (աշխուրների վարձատրությունը):

29. Կոլտնտեսականների անասնաբուծության, թռչնաբուծության ու մեղվաբուծության զարգացմանը նըպաստելու համար, հարկից ազատվում են բոլոր անասունները, ձագարները, մեղուները և թռչունները:

30. Կոլտնտեսական առևտուրը զարգացնելու նպատակով կոլտնտեսականների նկատմամբ չի կիրառվում մենատնտեսների համար սահմանված գյուղատնտեսական մթերքները չուկայում գոյացող գներով վաճառելուց ստացած յեկամուտների հարկումը:

31. Գյուղական հարկային հանձնաժողովները կարող են լիովին կամ մասամբ ազատել հարկից կոլտնտեսականների առանձին տնտեսությունները: Այդ նպատակով գյուղական հարկային հանձնաժողովները կազմում են այդպիսի տնտեսությունների ցուցակները: Այդ ցուցակները քննարկվում են և ստուգվում են կոլտնտեսականների ընդհանուր ժողովներում և ապա գյուղ-

խորհուրդը ներկայացնում է շրջանային գործադիր կոմիտեյին ի հաստատություն:

32. Տեղափոխվող կոլտնտեսությունների անդամների տնտեսությունները ազատվում են հարկից նույնքան ժամանակով, վորքան ժամանակով ազատվում են կոլտնտեսությունները:

33. Հարկից լիովին ազատվում են կոլտնտեսականների այն տնտեսությունները, վորոնց կազմի մեջ մըտնում են՝

ա) ԽՍՀՄ-ի շքանշաններով կամ պատվավոր հեղափոխական զենքով պարգևատրված անձինք և աշխատանքի հերոսներ.

բ) Ժամկետավոր (անընդհատ) կամ գերագետիկ ծառայության մեջ գտնվող կադրային պետկազմի շաքային և կրտսեր զինվորականներ, հաշված նաև 1933 թ. դորակոչվածներին.

գ) կադրային և պահեստում (ռեզերվ) գտնվող միջին, ավագ և բարձր պետկազմի զինվորականներ.

դ) սահմանված հավաքներին, ինչպես և նախագորակոչային կամ արտադորային պարապմունքները զեկավարելու համար, վորպես հրահանգիչներ կանչված, յերկարատե արձակուրդում, յերկրային մասերի փոփոխական կազմում և պահեստում գտնվող միջին, ավագ և բարձր պետկազմին պատկանող անձինք.

յե) կրտսեր հրամկազմին պատկանող այն զինվորականները, վորոնք փոխադրավծ են յերկարատե արձակուրդից յերկրային մասերի փոփոխական կազմի մեջ.

զ) նախկին կարմիր դվարդիականներ և կարմիր շարտիզաններ.

ը) Միլիցիայի և աշխ. ուղղիչ հիմնարկների ոպերատիվ-շարային և վարչատնտեսական կազմին պատկանող անձինք.

թ) ռազմականացված պահակներում աշխատող անձինք.

ժ) հաշմանդամության առաջին, յերկրորդ և՝

յերբորդ խմբերին պատկանող պատերազմի և աշխատանքի հաշմանդամներ:

Ծանոթութիւն.— «բ» և «գ» կետերում թրված զինվորականները արտոնութիւնն ստանալու իրավունք ունեն նաեւ այն դեպքում, յետե նրանք յերկարատե արձակուրդ են ստացել, պահեստի մեջ են փոխադրվել, կամ բոլորովին ազատվել են ծառայութիւնից 1933 թ. հունվարի մեկից հետո:

34. Այն տնտեսութիւններում, վորոնց կազմի մեջ կան զինվորականներ և պահեստի զինապարտներ, վորոնք կանչված են սահմանված հավաքների և ուսուցման համար, (բացի 33-րդ հոդ. «դ» կետում թվածներից), հարկի այն մասը, վորի վճարման ժամկետը լրանում է ուսուցման և հավաքի ժամանակամիջոցում—հետաձգվում է այդ անձանց վերադառնալուց հետո մեկ ամիս ժամանակով:

35. Տարերային աղետներից տուժած տնտեսութիւնները, ազատվում են հարկից լրիվ կամ մասնակի չափով չըջանալին հարկային հանձնաժողովների վորոշմամբ, տնտեսութիւնն ունակութիւն և կրած վնասի չափի համեմատ:

36. Հորկից լրիվ ազատվում են գյուղի սոցիալատական վերակառուցման և հանրային սեփականութիւն պահպանման պայքարում կուլակային վրեժխնդրութիւնից տուժած գյուղական ակտիվիստների ընտանիքները:

37. Հարկից լրիվ ազատվում են պետական գույքի պահպանման, պաշտոնական պարտականութիւններէ կատարման ժամանակ կամ պարտականութիւնները կատարելու հետևանքով սպանված անտառային աշխատողների ընտանիքները:

38. Բացի վերոհիշյալ արտոնութիւններից, կուտնտեսականներին տրվում է նաեւ այս վորոշման հոդ. հոդ. հոդ. 59-64 և 72-74 թված արտոնութիւնները:

Գ. ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ

ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

39. Կուտնտեսականների գյուղհարկի վճարման համար ըստ առանձին չըջանների սահմանվում են հետևյալ ժամկետները՝

ա) Լենինականի, Արթիկի, Թալինի, Դիլիջանի, Իջևիանի, Սիսիանի, Գորիսի, Ղափանի, Մարտունու, Բաաբգեչաբի, Քեչիչքենդի, Փաշալուի, Ստեփանավանի, Ղաբաքիլիսայի, Շամշողինի, Նոր-Բայազետի, Ախտայի, Ալլուսվերդու, Աղբաբայի, Ապարանի և Մեղրու չըջանների, Կոտայքի, Աշտարակի, Վաղարշապատի և Վեդիի լեռնային մասի համար:

Առաջին ժամկետը 1933 թ. սեպտեմբերի 20-ը պետք է դանձվի հարկի 50 տոկոսը:

Յերկրորդ ժամկետը՝ մինչև 1933 թ. նոյեմբերի մեկը պետք է դանձվի հարկի 25 տոկոսը:

Յերրորդ ժամկետը՝ մինչև 1933 թ. դեկտեմբերի մեկը պետք է դանձվի հարկի 25 տոկոսը:

Ղամարլի, Ղուրդուղուլու չըջանների և Աշտարակի, Կոտայքի, Վաղպատի և Վեդիի դաշտային մասերի համար՝

Առաջին ժամկետը՝ մինչև 1933 թ. հոկտեմբերի մեկը պետք է դանձվի հարկի 50 տոկոսը:

Յերկրորդ ժամկետը՝ մինչև 1933 թ. նոյեմբերի մեկը պետք է դանձվի հարկի 25 տոկոսը:

Յերրորդ ժամկետը՝ մինչև 1933 թ. դեկտեմբերի մեկը պետք է դանձվի հարկի 25 տոկոսը:

40. Յուրաքանչյուր չըջանի համար սահմանված ժամկետներն անպայման հրապարակվում են ի դիտութիւն բոլորի, հայտարարվում են գյուղական ժողովներում, ցույց են տրվում հարկաթերթերում և հարկային ամբողջ տարվա ընթացքում չեն կարող փոփոխվել:

ՀԱՏՎԱԾ 4-րդ

ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Ա) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

41. Յուրաքանչյուր առանձին աշխատավորական մենատնտեսի գյուղհարկը հաշվվում է տնտեսության ամբողջ յեկամտից, վորն ստացվում է՝

ա) դաշտամշակությունից (հատիկային մշակույթ-ներից, կարտոֆիլից, չալթուկից, ցանովի խոտաբույսերից և այլն)։

բ) մարգագործությունից։

գ) ամեն տեսակի անասուններից, բացի խոզերից։

դ) գյուղատնտեսական հետևյալ հատուկ ճյուղերից՝ բանջարաբուծությունից, բոստաններից, այգեգործությունից, խաղողագործությունից, ծխախոտագործությունից, թթանոցներից և մեղվաբուծությունից։

յե) արհեստավորական և տնայնագործական զբաղմունքներից և վոչ-վարձու այլ վոչ-գյուղատնտեսական զբաղմունքներից։

Ծանոթություն 1.— Գյուղհարկի յենթակա չեն չերամապահության, թռչնաբուծության, ճագարաբուծության և խոզաբուծության յեկամուտները։

Ծանոթություն 2-րդ.— Թթանոցների յեկամուտները յենթակա չեն հարկի միայն այն տընտեսություններում, վորոնք չերամապահությամբ չեն զբաղվում և թթանոցներն ոգտագործում են այլ նպատակների համար։

Ծանոթություն 3-րդ.— Գորգագործությունից ստացած յեկամուտները յենթակա չեն հարկման միայն այն տնտեսություններում, վորոնք կոոպերատիվ ցանցի մեջ մտնող արտերների անդամներ չեն, կամ կոոպերատիվայի հիմունքներով կոոպերատիվ և պետական կազմակերպու-

թյուններին չեն հանձնում իրենց արտադրանքն, այլ վաճառում են մասնավոր շուկայում։

Ծանոթություն 4-րդ.— Վարձու աշխատանքի համար ստացած յեկամուտները գյուղհարկի յենթակա չեն և պատշաճ դեպքերում հարկվում են յեկամտահարկով։

Ծանոթություն 5-րդ.— Վորսորչական ըզգաղմունքների յեկամուտները յենթակա չեն գյուղհարկի միայն այն չրջաններում, վորտեղ այդ զբաղմունքը արդյունաբերական զարգացման է հասել։

Ծանոթություն 6-րդ.— Ձկնորսությունից ստացված յեկամուտները յենթակա չեն գյուղհարկի այն դեպքում, յերբ ձկնորսական տնտեսությունը վորսած ձուկը ըստ կոոպերատիվայի չի հանձնում պետական ձկնարդյունաբերությանը կամ կոոպերատիվ կազմակերպություններին։

42. Յեկամտի այն աղբյուրները, վորոնք յենթարկված են գյուղհարկի ուրիշ վոչ մի հարկի յենթակա չեն, բացի՝

ա) արհեստահարկից, վորին յենթարկվում են ձեռնարկությունները և արհեստները չրջանառության տոկոսային հարաբերությամբ։

բ) ջրային տուրքից-ջրովի հողագործական չրջաններում։

գ) ձկնորսությամբ պարապելու իրավունքի համար գանձվող տոմսային տուրքից։

Այն հողամասերից, վորոնց յեկամուտները յենթակա չեն գյուղհարկի ինչպես և չենքերով զբաղեցրած այն հողամասերից, վորոնք անմիջորեն կապված է գյուղատնտեսական ոգտագործման հետ, ընտա չի գանձում։

Գյուղհարկի յենթակա տնտեսությունների կազմի մեջ մտնող չենքերը ազատվում են չենքերի տեղական հարկից։

43. ՀՍԽՀ-ի բոլոր չրջանային կենտրոններում գյուղատնտեսությամբ զբաղվող անձինք յենթակա յեն գյուղհարկի: Յերևան, Լենինական և Ղարաբլիխա քաղաքներում գյուղհարկ չի անցկացվում:

Այդ քաղաքներում ապրող և միաժամանակ քաղաքից դուրս գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքացիները գյուղհարկ են վճարում ընդհանուր հիմունքներով, գյուղատնտեսությունից ստացած յեկամուտների համեմատ:

ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԱՐԿՎՈՂ ՅԵԿԱՄՈՒՏԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Բ. ՅԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆԵՐ.

44. Աշխատավորական մենատնտեսների դաշտամշակությունից, անասնապահությունից, բանջարաբուծությունից, բոստաններից, այգեգործությունից, խաղողագործությունից, ծխախոտագործությունից, բամբակագործությունից, մեղվաբուծությունից և այլ հատուկ ճյուղերից—ստացված յեկամուտները վորոշվում են յեկամտաբերության նորմաներով:

45. Թված աղբյուրների համար սահմանվում են յեկամտաբերության հետևյալ նորմաները ըստ առանձին շրջանների:

Տես տախտակ № 2

Վորոշ դեպքերում Շրջանային Գործադիր Կոմիտեները ՀՍԽՀ-ի Ժողկոմխորհի թույլտվությամբ, կարող են սահմանել առանձին գյուղխորհուրդների համար յեկամտաբերության տարբեր նորմաներ:

Շրջանային յեկամտաբերության նորմաներն ըստ գյուղերի փոփոխության յենթարկելու մասին միջնորդությունները հարուցվում են ՀՍԽՀ-ի Ֆինժողկոմատի միջոցով փոշ ուշ 1933 թ. հունիսի 30-ից:

Ծանոթություն 1.—Չանադան շրջանների սահմանակից գյուղերի յեկամտաբերության նոր

մաների մեջ խոշոր տարբերություններից խուսափելու նպատակով (յեթե այդ տարբերությունները չեն բղխում տնտեսական առանձնահատուկ պայմաններից), շրջանային գործադիր կոմիտեները պարտավոր են նախքան նորմաներն ըստ գյուղերի վորոշելը, համաձայնեցնել այդպիսիները հարեան շրջանների գործկոմների հետ:

Ծանոթություն 2-րդ.—Շրջանային գործկոմներին իրավունք է վերապահվում շրջանային նորմաները փոփոխության յենթարկելու կարիք յեղած դեպքում, միջնորդություն հարուցելու ՀՍԽՀ-ի Ֆինժողկոմատի միջոցով Ժողկոմխորհի առաջ:

45. Դաշտամշակության, բանջարաբուծության, բոստանների, խաղողագործության, այգեգործության և ծխախոտագործության հարկվող յեկամուտը վորոշվում է յուրաքանչյուր առանձին տնտեսության համար սահմանված զարնանային ցանքի պլանի և հաշվի առնելով աշխատանքի ցանքի ու բաղմամյա մշակույթների տարածությունների համեմատ:

46. Մարգագործության յեկամուտը վորոշելիս հաշվի յեն առնվում միայն այն տարածությունները, վորոնք մշտապես ոգտագործվում են վորպես խոտհարքներ:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՅԵԿԱՄՈՒՏԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

47. Անասունների յեկամուտը վորոշելու համար հաշվի յեն առնվում՝

ա) 4 տարեկանից վեր ձիերը, յեղները, գոմեշները, եչերը, ջորիները, և ուղտերը:

բ) 3 տարեկանից վեր ցուլերը:

գ) կովերը և մատակները առաջին ծնից հետո և 3 տարեկանից վեր յերինջները:

դ) ձմեռած վոշխարները և այծերը:

Անասունների տարեկր վորոշվում է ըստ 1-ը մայիսի 1933 թ.:

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

48. Մեղվարուծության յեկամուտները վորոշելու (մշ) միտղոմ վմգդիտթգի յրաիդստ դգի վիշոչ մոյոչ ջանակավոր և քթոցաձև) :

**ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ՎՈՉ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ**

49. Վոչ գյուղատնտեսական յեկամուտները հաշվի յեն աննվում 1932 թվի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամանակամիջոցում ստացված գումարների չափերով :

50. Յուրաքանչյուր առանձին տնտեսության վոչ-գյուղատնտեսական յեկամուտները վորոշում են գյուղական հարկային հանձնաժողովները :

Այս դեպքում ընդհանուր յեկամտից հանվում են զբաղմունքին վերաբերող բոլոր տեսակի հիմնական արտադրական ծախքերը (հումքի, կիսաֆարրիկատների, վառելանյութի և այլն) :

Այդ ձևով վորոշված վոչ գյուղատնտեսական յեկամուտը ավելացվում է տնտեսության մյուս հարկվող յեկամուտներին հետևյալ հիմունքներով՝

ա) զբոսի վոչ վարձու զբաղմունքներից ստացված յեկամուտը մտցվում է 30 տոկոսի չափով :

բ) տնայնագործական, արհեստի, և այլ վոչ գյուղատնտեսական վաստակների 30 տոկոսի չափով :

Իրենց արտադրանքն արտելին հանձնելուց, կոոպերացված տնայնագործների ու արհեստավորների ստացած յեկամուտները գյուղատնտեսական հարկի չեն յենթարկվում, այլ յենթարկվում են յեկամտային հարկի՝ աշխատավարձի համար սահմանված կարգով :

Իսկ կոոպերացված տնայնագործների և արհեստավորների այն յեկամուտները, վորոնք ստացվում են արտադրանքն արտելից դուրս, այլ տեղ վաճառելուց, մտցվում են տնտեսության գյուղատնտեսական հարկի

յենթակա յեկամտի մեջ, վոչ կոոպերացված տնայնագործների յեկամտի հարկման համար սահմանված համար հիմունքներով :

51. Գորգագործության յեկամուտները յենթակա յեն գյուղհարկի արհեստա-տնայնագործական զբաղմունքների յեկամուտների հարկման համար սահմանված հիմունքներով :

ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԳՆԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐԲՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻՑ ՄՏԱՅԱՄ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ.

52. Շուկայում առաջացող գներով գյուղատնտեսական մթերքների վաճառքից մենատնտեսների ստացած յեկամուտները վորոշվում են 1932 թ. հաշվառման պահից մինչև 1933 թ. հաշվառումը կատարելու ժամանակամիջոցում յեղած գումարի չափով :

Այդ յեկամուտը միացվում է տնտեսության մյուս յեկամուտներին վոչ ավելի քան մնացած հարկվող յեկամտի (գյուղատնտեսական և վոչ-գյուղատնտեսական) 30 տոկոսի չափով :

53. Շուկայում առաջացող գներով գյուղատնտեսական մթերքների վաճառքից ստացված յեկամուտների գումարները վորոշում են գյուղական հարկային հանձնաժողովները :

Գյուղական հարկային հանձնաժողովների վորոշած այդ յեկամուտների չափերը հաստատում են չրջանային հարկային հանձնաժողովները :

**ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԱՐԿԸ
ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ.**

54. Յեթե աշխատավորական մենատնտեսների հարկվող յեկամուտը 200 ռ. ավելի չի, նրանցից հարկ է դանձվում կայուն զբույքով 15 ռ. տնտեսությունից :

200 ռ. ավելի հարկվող յեկամուտ ունեցող մենատնտեսներից հարկ է դանձվում զբույքների հետևյալ աղյուսակով՝

**ՄԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ
ՅԵՆԹԱԿԱ ՅԵԿԱՍՏԻ ԶԱՓԸ**

**ՄԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԵԼԻՔ
ՀԱՐԿԻ ԶԱՓԸ**

1. 200 ուռբլուց ավելի մինչև 300 ու.	15 ո. + 10 կ. 200 ո. գերա- զանցող յեկամտի յուրա- քանչյուր ո.
2. 300 ուռբլուց ավելի մինչև 500 ո.	25 ո. + 20 կ. — 300 ո. գերա- զանցող յեկամտի յուրա- քանչյուր ո.
3. 500-ից ավելի մինչև 700 ո.	65 ո. + 30 կ. 500 ո. գերա- զանցող յեկամտի յուրա- քանչյուր ո.
4. 700 ուռբլուց ավելի	125 ո. + 33 կ. — 700 ո. գերա- զանցող յեկամտի յուրաքան- չյուր ո.

54. Այն դեպքերում, յերբ տվյալ վայրում կոլտրն-տեսականների համար սահմանված գույքը 15 ուռբլուց ավելի չէ, աշխատավոր մենատնտեսների հարկի չափը չի կարող այդ դրույքից պակաս լինել:

56. Այն տնտեսություններին, վորոնք ունեն 2 աշխատունակ անդամ—գեղջ և տրվում հարկից 5 տոկ. յերեք անաշխատունակ անդամ ունեցող տնտեսություններին 10 տոկոս, իսկ 4 և ավելի անաշխատունակ անդամ ունեցողներին 15 տոկոս:

**Դ) ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**

57. Գյուղական հարկային հանձնաժողովները առանձին չքավոր տնտեսություններին կարող են ազատել հարկից լրիվ կամ մասնակի չափով:

Այդ նպատակով գյուղական հարկային հանձնաժողովները կազմում են չքավոր տնտեսությունների ցուցակները, ըստ վորում հատուկ ուշադրություն են դարձնում կարմիր բանակայինների, նախկին կարմիր զվարդիականների և կարմիր պարտիզանների տնտեսու-

թյուններին ազատելու խնդրի վրա:

Այդ ցուցակները գյուղխորհուրդները ներկայացնում են չրջանային գործադիր կոմիտեներին ի հաստատություն:

**ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԾԱԹԱՅՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

58. Գյուղհաբի յենթակա չեն այն բանվորները և ծառայողները, վորոնք վարում են իրենց տնտեսությունը—ազարակային (տնամերձ) հողամասերում և ունեն վոչ ավելի քան մեկ կով, մանր անասուններ, խոտհարքներ, սակայն չունեն դաշտային հողամաս և բանող անասուններ, յեթե միայն աշխատավարձը հանդիսանում է նրանց հիմնական յեկամուտի աղբյուրը:

59. Հարկից ազատվում են այն անձանց տնտեսությունները, վորոնք մի քարույք վոչ պակաս ժամանակով կոնտրակտացիայի յեն յենթարկվել կամ ինքնաբերական են ածխարդյունաբերության ասպարեզում ստորերկրյա աշխատանք կատարելու համար: Այն դեպքում, յերբ նրանք չեն կատարում իրենց ստանձած պարտավորությունները, նրանց տնտեսություններին հարկը դանձվում է ընդհանուր հիմունքներով:

60. Հարկից ազատվում են յերկաթուղային, ջրային, խճուղային և գրունտային տրանսպորտի գծային աշխատողների գյուղատնտեսական բոլոր յեկամուտները, վորոնք ստացվում են տրանսպորտին հատկացված հողամասերից:

**ՏԵԽՆԻԲԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱ-
ՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

61. Շաքարի ճակնդեղի ցանքերը լրիվ ազատվում են հարկից:

62. Գյուղհաբից լրիվ ազատվում են յերեքնուկի և աշնանը վարած խամ հողերի վրա կատարած յերկաբամաղ կտավհատի ցանքերը: Կտավհատի մյուս ցանքերը, ինչպես և կանեփի ցանքերը հարկվում են առ-

տոնված կարգով այն ե՝ հատիկային մշակույթների համար սահմանված նորմայով:

63. Բամբակի ցանքերը հարկվում են հացահատիկային մշակույթների ՀՍԽՀ-ի համար սահմանված նորմայով:

Ջրովի հողագործական շրջաններում անջրդի (դեմի) հողերում կատարած բամբակի ցանքերն ազատվում են հարկից:

64. Կենսաֆի, կանառնիկի, հարավային կանեփի, քենդիրի ռամիի և լյուֆայի ցանքերի տարածութունները ազատվում են հարկից:

ԿԵՆԴԱՆՈՒԹՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԹՈՉԱՌՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

65. 1932 թվի համեմատությամբ տնտեսության ավելացած կովերը, ցուլերը, մատակները, վոչխարները և այծերը ազատվում են հարկից:

66. Հարկից ազատվում են կարակուլի և կիսակարակուլի (խառնուրդների) վոչխարները:

67. Հարկից լրիվ ազատվում են թռչնաբուծության և ճագարաբուծության յեկամուտները:

Արտոնություններ տնտեսություններին, վորոնց կազմի մեջ մտնում են գինվորական ծառայողներ, շֆանչաններով պարգևատրված անձինք, նախկին կարմիր Գվարդիականներ և կարմիր պարտիզաններ, աշխատանքի հերոսներ, ռազմականացված պահակների և միլիցիայի աշխատողներ, հաշմանդամներ և այլն:

68. Արտոնություններ են տրվում այն տնտեսություններին, վորոնց կազմի մեջ մտնում են՝

ա) ԽՍՀՄ-ի չբանջաններով կամ պատվավոր հեղափոխական զենքով պարգևատրվածներ և աշխատանքի հերոսներ:

բ) կաղերային, շարային և կրտսեր-պետկազմի զինվորականներ, վորոնք գտնվում են Ժամկետավոր (անքնդհատ) կամ գերազեփիկ ծառայության մեջ, հաշվե-

լով նաև 1933 թ. աշնանը զորակոչվածներին:

գ) ԲԳԿԲ-ի կաղերային պահեստի (ռեզերվ) պետկազմի միջին, ավագ և բարձր զինվորականներ:

դ) նախազորակոչային կամ արտազորային պարամունքները անցկացնելու համար վորպես հրահանգիչներ, կամ իրենց համար սահմանված հավաքների կոչված՝ յերկրային մասերի փոփոխական կազմում, յերկարատե արձակուրդում և պահեստում գտնվող միջին, ավագ և բարձր պետկազմին պատկանող անձինք:

յե) կրտսեր պետկազմի զինվորականներ, վորոնք յերկարատե արձակուրդից փոխադրված են յերկրային մասերի փոփոխական կազմի մեջ:

զ) նախկին կարմիր գվարդիականներ և կարմիր պարտիզաններ:

ը) Միլիցիայի և ուղղիչ-աշխատավորական հիմնարկների վարչատնտեսական և ոպերատիվ շարային կազմին պատկանող անձինք:

թ) ռազմականացված պահակներում ծառայող անձինք:

ժ) հաշմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ խմբերին պատկանող պատերազմի և աշխատանքի հաշմանդամներ:

Թված տնտեսություններին տրվում են հետևյալ արտոնությունները՝

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀ ՄԱՆՎԱԾ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ	ՅԵԹԵ տնտեսության մեջ կան ուրիշ աշխատունակ տղամարդիք	ՅԵԹԵ տնտեսության մեջ չկա այլ աշխատունակ տղամարդ
Մինչև 20 ա.	100	100
20-ից ավելի մինչև 30 ա.	40	60
30-ից » » 50 ա.	25	35
50-ից » » 75 ա.	25	25
75-ից » » 100 ա.	5	10
100-ից ավելի...	5	5

Ծանոթություն. — «բ» և «գ» կետերում թված

գինվորականները ոգտվում են արտոնություն ստանալու իրավունքով նաև այն դեպքում, յեթե նրանք ստացել են յերկարատե արձակուրդ, կամ բոլորովին աղատվել են ծառայությունից 1933 թ. հունվարի 1-ից հետո:

69. Այն տնտեսությունների համար, վորոնց կազմի մեջ մտնում են այնպիսի գինվորականներ և պահեստի գինապարտներ, վորոնք հրավիրվել են նրանց համար սահմանված ուսման ու հավաքների, հարկի այն վճարումը, վորի գումարը ժամկետը զուգադիպում է ուսման կամ հավաքի ժամանակամիջոցին, հետաձգվում է մի ամսով, հաշված նրանց վերադառնալու օրից:

70. Յեթե տնտեսությունների կազմի մեջ մտնում են յերկրային մասերի փոփոխական կազմի գինվորականներ, վորոնք կոչված են յեռամսյա ուսման, ծառայության առաջին տարին, կամ վորոնք ուսումնական հավաքի յեն հրավիրվել իրենց սեփական շարային ձիերով, ապա այդ ձիերն աղատվում են հարկից:

ՏԵՂԱՓՈԽՎՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

71. Պլանային կարգով մինչև 1930 թ. ապրիլի 1-ը տեղափոխված մենատնտեսներին տրվում են հետևյալ արտոնությունները՝

ա) այն տնտեսությունները, վորոնք տեղափոխվել են այնպիսի վայրեր, վորտեղ պահանջվում է կոճղահատության և մելիորատիվ այլ աշխատանքների միջոցով հողերը մշակելի դարձնել, աղատվում են հարկից տեղափոխվելուց հետո 5 տարի շարունակ:

բ) այն տնտեսությունները, վորոնք տեղափոխվել են այնպիսի վայրեր, վորտեղ պահանջվում են խամ հողերի մշակում, աղատվում են հարկից տեղափոխվելուց հետո 3 տարի շարունակ:

գ) Հեռավոր Արևելք տեղափոխվող տնտեսություններն աղատվում են հարկից 10 տարի ժամանակով:

դ) այն տնտեսությունները, վորոնք վերաբնակվել

են Կարելյայի ԱԽՍՀ-ում և Մուրմանսկի գավառում, հարկից աղատվում են 10 տարի ժամանակով:

Ահհատական այն մենատնտեսները, վորոնք տեղափոխվել են 1930 թ. ապրիլի 1-ից հետո, հարկային արտոնություններ են ստանում միմիայն այն չըջաններում վերաբնակվելու դեպքում, վորոնց ցուցակը կազմում է ԽՍՀՄ-ի Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը ԽՍՀՄ-ի Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի հետ միասին:

Նույն կարգով վորոշվում է այդ տնտեսություններին տրվող արտոնությունների ծավալը:

ԱՅԼ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

72. Անտառի մթերման, անտառանյութերը ջրով փոխադրելու և կիղահողի (տորֆի) պատրաստման աշխատանքից ստացված յեկամուտները աղատվում են հարկից:

73. Հետախույզների (старатели) վաստակները աղատվում են հարկից:

Տեղական գյուղացիության այն հետախույզների տնտեսությունները, վորոնք բանում են հետախույզական աշխատանքներում իրենց սեփական ձիերով աղատվում են հարկից:

74. Գյուղահարկից աղատվում են այն յեկամուտները, վորոնք ստացվում են՝

ա) յեղենու ընկուզներ հավաքելուց, բ) վերամշակման համար պետքական հումուլթ (утильсырье) և ջարդված մետաղներ հավաքելուց, գ) խեժ հավաքելուց:

Այս արտոնությունը տրվում է այն դեպքում, յերբ հավաքվածը ամբողջությամբ հանձնվում է պետական և կոոպերատիվ կազմակերպություններին:

75. Տարբերային աղետներից տուժած տնտեսություններին հարկից լիովին կամ մասամբ աղատում են չըջանային հարկային հանձնաժողովները՝ յեննելով տնտեսության կրած վնասի չափից և տնտեսության ունակությունից:

76. Հարկից լիովին ազատվում են այն գյուղական ակտիվիստների ընտանիքները, վորոնք տուժել են կուլակային վրիժառությունից՝ գյուղի սոցիալիստական վերակառուցման և հանրային սեփականության պահպանության համար մղվող պայքարում:

77. Պետական դուլքի պահպանման համար իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ, կամ այդ պարտականությունների կատարման հետևանքով սպանված անտառային աշխատողների ընտանիքները ազատվում են հարկից:

78. Այն անձանց տնտեսությունները, վորոնք ըստանձնել են վորբերի և նրանց դուլքի խնամակալությունը, խնամակալության հաստատումից յերեք տարի ժամանակով ազատվում են հարկից այն յեկամուտների համար, վորոնք ստացվում են խնամակալության տակ գտնվողների բաժինը կազմող հողամասերից և խնամակալության տակ գտնվողներին պատկանող անասուններից: Այս արտոնությունները գործադրում են միմիայն այն դեպքում, յեթե խնամակալներն ապրում են վորբերի հետ միասին և նրանց տնտեսությունը վարվում է միասին:

ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

79. Աշխատավորական մենատնտեսները հարկը վճարում են նույն կարգով և նույն ժամկետներում, վորպիսիք սահմանված են կոլտնտեսականների համար (հոդ. 39-րդ):

ՀԱՏՎԱԾ 5-րդ

ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

80. Բոլոր կուլակային տնտեսություններն իրենց իրական յեկամուտների համեմատ հարկվում են անհատական կարգով, այլ վոչ ըստ նորմաների:

Շրջանային գործադիր կոմիտեները պարտավոր են

սահմանել խիստ հսկողություն, վորպեսզի հայտարերվեն բոլոր կուլակային տնտեսությունները, հարկվեն անհատական կարգով, նրանց հարկը գանձվի ժամանակին ու լրիվ չափով, ինչպես և խիստ հսկողություն սահմանել, վորպեսզի վոչ մի դեպքում աշխատավորական տնտեսությունները չհարկվեն անհատական կարգով:

81. Տնտեսությունները կուլակային են համարվում և անհատական կարգով հարկման յենթարկվում հետևյալ հատկանիշներից վորևե մեկի առկայության դեպքում:

ա) յեթե տնտեսությունը սիստեմատիկորեն զբաղվում է չարաչահությամբ (սպեկուլյացիայով—դնումներ, վաճառք) և այդ միջոցով հարստանում է (չահում է) բանվորների ու գյուղացիների հաշվին:

բ) յեթե տնտեսությունը չարամտորեն չի կատարում իրեն տրված ցանքի պլանները և որենքով սահմանված այլ պարտավորությունները պետության հանդեպ, այն դեպքում, յերբ տնտեսությունը վորոշակի չքափորական չէ:

գ) յեթե տնտեսությունը սիստեմատիկորեն վարձու աշխատանք է կիրառում գյուղատնտեսական աշխատանքներում, կամ անտաշնագործության մեջ և ձեռնարկություններում, բացառությամբ այն դեպքերի, յերբ վարձու աշխատանք կիրառելը բղիում է գյուղատնտեսական դանազան մշակույթների առանձնահատկություններից կամ զբաղմունքի բնույթից և չի գերազանցում բանվորական ուժ վարձելու առավելագույն չափից:

Բանվորական ուժ վարձելու առավելագույն չափը, վորն անհատական կարգով հարկելու հիմք չի ծառայում բոլոր շրջանների համար սահմանվում է՝

1. Հացահատիկային տնտեսությունների համար մինչև 50 վարձու բանվորական ուր:

2. Խաղողագործական տնտեսությունների համար մինչև 125 վարձու բանվորական ուր:

3. Այգեղործական տնտեսությունների համար մինչև 75 վարձու բանվորական ուր:

4. Բանջարարուծական կամ չալթուկադործական տնտեսությունների համար մինչև 100 վարձու բանվորական ուր:

5. Ծխախոտադործական տնտեսությունների համար մինչև 240 վարձու բանվորական ուր:

6. Բամբակադործական տնտեսությունների համար մինչև 150 վարձու բանվորական ուր:

7. Անասնապահական տնտեսությունների համար մեկ հովիվ կամ մեկ հոտաղ:

8. Տնայնադործների և արհեստավորների համար մեկ չափահաս բանվոր, յեթե բանվորի կամ աշակերտի առկայությունը բղխում է արտադրության առանձնահատկությունից:

Ծանոթություն 1.—Տնայնադործները և արհեստավորները, վորոնք իրենց ձեռնարկություններում գործադրում են մեքենական շարժիչներ (բացի «դ» կետում մատնանշված ձեռնարկություններից), անհատական հարկման յենթակա չեն այն դեպքում, յեթե այդ դրադմունքը կատարվում է առանց վարձու աշխատանքի:

Ծանոթություն 2.—Վորբերի, այրիների, հաշմանդամների և սովորողների տնտեսություններում, վորտեղ չկան աշխատունակ տղամարդիկ, կամ թե նրանց աշխատունակ տղամարդիկ ծանր հիվանդ են, գտնվում կարմիր բանակում, հանքադործներ են, կամ բանվորներ են ու բացառապես են տնտեսությունից դուրս շինարարական աշխատանքների վրա աշխատելու համար մեկ մշտական վարձու բանվորի ու սահմանված սեզոնային բանվորների որերի թվից վոչ ավելի աշխատանք կիրառելը հատկանիշ չի ծառայում տնտեսությունն անհատական կարգով հարկելու համար: Նույն տնտեսություններում մեկ վարձու բանվորի բանվորական որերից և սահմանված

թվով սեզոնային բանվորների որերից վոչ ավելի աշխատանք կիրառելը ևս հատկանիշ չի անհատական կարգով հարկելու համար:

Ծանոթություն 3.—Յեթե անասնապահական տնտեսությունն ունի մեկ մշտական հովիվ կամ հոտաղ և միաժամանակ ոչտադործում է սեզոնային 35 բանվորական որից ավելի, ապա այդ հանգամանքը հիմք է ծառայում տնտեսությունն անհատական կարգով հարկելու համար:

Ծանոթություն 4.—Յեթե տնտեսությունն ունի խառն մշակույթի բնույթ, ապա բանվորական ուժ վարձելու առաջնություն չափը սահմանվում է տնտեսության հիմնական դյուղատնտեսական ճյուղի համար նախատեսված բանվորական որերի քանակով:

դ) յեթե տնտեսությունն ունի աղաց, ձիթհան, դինգ, նորմայով աշխատող ողու դործարան, կորեկաղաց, գլրան, կարտոֆիլի, պտուղների և բանջարեղենի չորանոց, կամ այլ արդյունաբերական ձեռնարկություն, այն դեպքում, յերբ այդ ձեռնարկությունում գործադրվում է մեքենայական շարժիչ:

յե) յեթե տնտեսությունն ունի նախորդ «դ» կետում թված ձեռնարկություններից մեկը, վորն աշխատում է քամու կամ ջրի ուժով, այն դեպքում, յերբ ձեռնարկության տարեկան յեկամուտը 150 ո. ավելի յե, իսկ ջրադացին՝ 200 ո. ավելի յե: Այդ գումարների չափով յեկամուտ ունեցող քամու կամ ջրի ուժով աշխատող ձեռնարկությունները հիմք են ծառայում տնտեսությունն անհատական կարգով հարկելու համար, յերբ տնտեսության ընդհանուր յեկամուտը (դյուղատնտեսութունից և վոչ-դյուղատնտեսությունից) 700 ո. ավելի յե:

Ծանոթ. 1.—Նորմայով աշխատող ողու դործարանները հատկանիշ են ծառայում տնտեսությունն անհատական կարգով հարկելու համար նույնպես այն դեպքերում, յերբ տնտեսությունն ողի քաշե

յու և վաճառելու նպատակով հումուլթ և գնում, անկախ նրանից գործադրվում և մեքենայական շարժիչ, թե վոչ, յեթե նրա տարեկան յեկամուտը բոլոր աղբյուրներից 700 ո. պակաս չե, իսկ ողու գործարանի յեկամուտը 150 ո. ավելի յե:

Ծանոթութիւն 2.— Այն դեպքում, յերբ քամու կամ ջրի ուժով աշխատող ձեռնարկութիւնը պատկանում մի քանի տրնտեսութիւնների (համատերերի), ուրիշ հատկանիշների բացակայութեան դեպքում, անհատական կարգով հարկվում են այն տնտեսութիւնները, վորոնք իրենց պատկանող ձեռնարկութեան մասից ստանում են տարեկան 150 ո. ավելի յեկամուտ, իսկ ջրաղացից 200 ո. ավելի յեկամուտ:

զ) յեթե տնտեսութիւնն ունի արդյունաբերական այնպիսի ձեռնարկութիւն, վորի միջոցով չահագործում և շրջակա բնակչութիւնը, աշխատանքներ հանձնարարելով տներում կատարելու համար կամ այդ ձեռնարկութիւնը տալիս և կապալով:

ը) յեթե տնտեսութիւնը վարձով և տալիս մեքենայական շարժիչ ունեցող բարդ գյուղատնտեսական մեքենաներ, կամ վարձով աշխատեցնում և այդ մեքենաներն ուրիշ տնտեսութիւնների համար:

թ) յեթե տնտեսութիւնը ստրկացուցիչ պայմաններով մյուս տնտեսութեան համար վարձակալում և կամ վարձով և տալիս այգիներ, խաղողի այգիներ, խոտհարքներ և այլ գյուղատնտեսական հողամասեր:

ժ) յեթե տնտեսութիւնը վարձով և տալիս սարքավորված առանձին շենքերը բնակչութեան կամ ձեռնարկութեան համար, այն դեպքում, յերբ շենքերից ստացած տարեկան յեկամուտը 300 ո. ավելի յե:

Ամարանոցային վայրերում տնտեսութիւնները համարվում են կուլակային և հարկվում են անհատական կարգով, յեթե ընդհանուր յեկամուտը 700 ո. ավելի յե, իսկ շենքերը վարձով տալուց յեկամուտը 500 ո. ավելի:

Ծանոթութիւն 1.— Ամարանոցային վայրեր են համարվում Դիլիջանը, Ստեփանավանը, Ծաղկաձորը, Ալիքուչակը, Գորիսը, Ն. Բայազետը, Յելենովկան, Ախտան, Բյուրականը և Նիկիտինոն:

Ծանոթութիւն 2.— Արգելվում և հարկի յենթարկել անհատական կարգով այն բանվորներին և ծառայողներին, վորոնց հիմնական զբաղմունքն և աշխատանքը, կամ վարձու ծառայութիւնը և վորոնք ունեն միաժամանակ վորք գյուղական տնտեսութիւն, վորպես յեկամտի ոժանդակ աղբյուր ու բացի այդ սեփական շենքեր, վորպիսիները չահագործում են վարձու տալու միջոցով:

Այդ բանվորները և ծառայողները հարկվում են ընդհանուր կարգով, վորպես աշխատավորական գյուղացիական տնտեսութիւններ, յեթե վարձով տված սարքավորված շենքի յեկամուտը 500 ո. ավելի չե:

ի) Յեթե տնտեսութիւնն առևտրական կամ արդյունաբերական չահագործման նպատակով վարձակալում և պտղատու այգի, խաղողի այգի և այլ ձեռնարկութիւններ:

Ծանոթութիւն 1.— Այգիների և հողի վարձակալութեան առևտրական կամ արդյունաբերական չահագործման բնույթն ու նպատակը վորոշում են շրջանային հարկային հանձնաժողովները:

Ծանոթութիւն 2.— Վարձակալած այգին չեկարող հատկանիշ լինել տնտեսութիւնն անհատական կարգով հարկելու համար, յեթե տարածութիւնը մեկ հեկտարից պակաս և:

լ) յեթե տնտեսութեան անդամները պարապում են առևտրով, վաճառութեամբ, կամ ունեն այլ, վոչ աշխատավորական յեկամուտներ, նույն թվում կրոնական պաշտամունքի ծառայողները, անկախ այդ աղբյուրներից ստացած յեկամուտի գումարից:

82. Անհատական կարգով հարկվող տնտեսությունները ցուցակները կազմում են գյուղական խորհուրդները:

Գյուղխորհուրդների կազմած ցուցակները ըննության են առնվում կոյտնտեսականների և աշխատավորական մենատնտեսների ախտիվի ժողովներում:

Անհատական կարգով հարկվող տնտեսությունների ցուցակները և նրանց յեկամուտները վերջնականապես հաստատվում են շրջանային գործադիր կոմիտեյի կողմից:

Այս կամ այն տնտեսության անհատական կարգով հարկելու, ինչպես և յեկամուտը ճիշտ վորոշելու մասին կասկածներ ծագելու դեպքում, շրջանային գործադիր կոմիտեները կատարում են տնտեսության հետադուտում:

83. Վոչ գյուղատնտեսական զբաղմունքներից ստացած բոլոր յեկամուտները միացվում են կուլակային տնտեսության հարկվող յեկամուտին լրիվ չափով:

84. Յեթե կուլակային տնտեսության յեկամուտը չի գերազանցում 1000 ռ. նրանից հարկ է դանձվում կայուն դրույքով—350 ռ.:

Յեթե կուլակային տնտեսության յեկամուտը 1000 ռ. ավելի յե նրանից հարկ է դանձվում դրույքների հետեվյալ աղյուսակով:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԿՎՈՂ ՅԵԿԱՄՈՒՏԸ	ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԸ
1000 ռ. ավելի մինչև 3000 ռ.	350 ռ. + 50% — 1000 ռ. գերազանցող գումարից
3000 ռ. » » 6000 ռ.	1350 ռ. + 60% — 3000 ռ. գերազանցող գումարից
6000 ռ. » » —	3150 ռ. + 70% 6000 ռ. գերազանցող գումարից

85. Անհատական կարգով գյուղհարկի յենթարկված տնտեսությունը վոչ մի հարկային արտոնություն ստանալու իրավունք չունի:

86. Կուլակային տնտեսություններում գյուղհարկի հետ միաժամանակ արհեստահարի և դանձվում այն բոլոր ձեռնարկություններից, վորոնք արհեստագործական հարկի որենքի համաձայն յենթակա յեն հարկի թե շրջանատնտեսությունից տոկոսային հարաբերությամբ և թե կայուն դրույքներով:

87. Յերեվանի, Ղարաբաղի և Լենինականի քաղաքային հողերում գյուղատնտեսություն վարող կուլակային տնտեսությունները յենթակա յեն յեկամուտային հարկի:

Մյուս բոլոր քաղաքների հողերում գյուղատնտեսություն ունեցող կուլակները յենթակա յեն գյուղհարկի:

88. Անհատական կարգով գյուղհարկի յենթարկված տնտեսությունները իրենց գյուղհարկը վճարում են լրիվ չափով մեկ ժամկետում, այն է՝ 1933 թ. սեպտեմբերի մեկից վոչ ուշ:

89. Ապակուլակացված այն տնտեսությունները, վորոնք չունեն թաղցրած յեկամուտներ, դույք և կապիտալ, գյուղհարկի յեն յենթարկվում աշխատավորական մենատնտեսների համար սահմանված ընդհանուր հիմունքներով, սակայն զրկվում են վորեւ արտոնություն ստանալու իրավունքից:

90. Այն տնտեսությունները, վորոնց կազմի մեջ մտնում են ընտրական իրավունքներից անցյալ գործունեյության համար զրկված անձինք (նախկին ժանդարմներ, վոստիկանության պաշտոնյաներ և այլն), յեթե այդ տնտեսությունները չունեն վորեւ հատկանիշ անհատական կարգով հարկվելու համար, չեն ոգտվում վոչ մի արտոնությամբ իսկ նրանց այս կանոնադրության ընդհանուր հիմունքներով հաշվարկված գյուղհարկը կրկնապատկվում է:

ՀԱՏՎԱԾ Ե-րդ

ՀԱՐԿԸ ԳԱՆՁՈՂ ԾԱՐՄԻՆՆԵՐԸ, ԴԻՄՈՒՄՆԵՐ ՅԵՎ ԳԱՆ- ԳԱՏՆԵՐ ՏԱԼՈՒ ՅԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

91. Գյուղական վայրերում գյուղհարկի կիրառման պարտականությունը դրվում է գյուղական խորհուրդներին ու շրջանային գործադիր կոմիտեների վրա:

Գյուղական խորհուրդների վրա դրվում է՝

ա) գյուղհարկի յենթակա տնտեսությունների, նրանց յեկամուտի աղբյուրների, վոչ գյուղատնտեսական և շուկայում գոյացող գներով գյուղատնտեսական մթերքներ վաճառելուց ստացած յեկամուտների լրիվ և ժամանակին հաշվի առնելու պատասխանատվությունը:

բ) անհատական կարգով գյուղհարկի յենթակա կուլակային տնտեսությունների ցուցակները կազմելու պարտականությունը:

գ) հաշվառման տվյալները (գյուղացուցակները, վոչ գյուղատնտեսական յեկամուտներ չունեցողների, շուկայում գոյացած գներով մթերքներ վաճառող տնտեսությունների, կուլակային տնտեսությունների, բնական աղետներից տուժած տնտեսությունների ցուցակները, ինչպես և կարմիր բանակայինների և այլ արտոնություններով ոգտվող տնտեսությունների ցուցակները) շրջանային գործադիր կոմիտեին ներկայացնելու պարտականությունը:

դ) Շրջանային գործադիր կոմիտեի հանձնարարությամբ գյուղհարկի յենթակա յեկամուտի գումարները հաշվարկելու, հարկաթերթերը լրացնելու, անձնական հաշիվները և գյուղհարկի հաշվապահությունը և հաշվետվությունը վարելու պարտականությունը:

յե) հարկաթերթերը վճարողներին հանձնելու, գյուղհարկի մուծումները ընդունելու և սահմանված կարգով հարկեր ընդունող հիմնարկություններին հանձնելու պարտականությունը:

92. Գյուղհարկի կամպանիան կիրառելու համար ամենուրեք գյուղխորհուրդներին կից, կազմակերպվում են գյուղական հարկային հանձնաժողովներ:

Գյուղական հարկային հանձնաժողովի անդամներ են հանդիսանում:

ա) գյուղխորհրդի նախագահը,

բ) գյուղխորհրդի ֆին. սեկցիայի ներկայացուցիչը:

գ) գյուղխորհրդի դաշտամշակություն (հողային սեկցիայի) ներկայացուցիչը.

դ) կոլտնտեսության վարչության ներկայացուցիչը.

յե) մեկ հարվածային կոլտնտեսական.

զ) գյուղխորհրդի կազմի մեջ մտնող մեկ առաջավոր մենատնտես:

Գյուղական հարկային հանձնաժողովի նախագահ և հանդիսանում գյուղխորհրդի նախագահը:

93. Գյուղական հարկային հանձնաժողովների վրա դրվում են հետևյալ պարտականությունները՝

ա) գյուղի տնտեսությունների, նրանց գյուղատնտեսական յեկամուտների աղբյուրների հաշվառումն, վոչ գյուղատնտեսական և շուկայում գոյացող գներով մթերքներ վաճառող տնտեսությունների՝ ցուցակները կազմելը և այդ յեկամուտները վորոշելը:

բ) անհատական կարգով հարկման յենթակա կուլակային տնտեսությունների յեկամուտների վորոշելը, ցուցակների հաստատելը և քննությունը:

գ) գյուղհարկից ազատվող սակավագուր կոլտնտեսականների և աշխատավորական մենատնտեսների ցուցակները կազմելը, քննելը, հաստատելը և գյուղխորհրդին ներկայացնելու պարտականությունը:

դ) հարկատուների դիմումները և վանդատների քննությունը:

94. Շրջանային գործադիր կոմիտեների վրա դրվում են հետևյալ պարտականությունները՝

ա) հաշվառման ղեկավարությունը.

բ) գյուղխորհուրդները կազմած գյուղացուցականների և կատարված հաշվառման ճշտության ստուգումը:

գ) գյուղհարկից ազատվող տնտեսությունների ցուցակների հաստատումը:

դ) շրջանի սահմաններում գյուղհարկի դանձման աշխատանքների ղեկավարությունը և հսկողությունը:

յե) կոլտնտեսությունների վարչությունների հրահանգումը, ինչպես և կոլտնտեսությունների գյուղհարկի գումարների վորոշելը:

զ) գյուղհարկի կանոնադրությամբ սահմանված բոլոր արտոնությունների կիրառումը:

ը) կոլտնտեսությունների հարկը հաշվելու համար սխալ տեղեկություններ ներկայացնելու համար, մեղավոր անձանց տուգանումը:

թ) հարկման յեթակա յեկամուտները և հարկը հաշվելը, քացատությամբ այն գյուղերի, վորտեղ այդ աշխատանքը դրված և գյուղխորհրդի վրա:

ի) տարերային աղետներից տուժած տնտեսությունների ցուցակների հաստատումը:

լ) առանձին հարկատուների տնձնական հաշիվների ինչպես և գյուղհարկի հաշվետվության աշխատանքներ վարելը, յեթե այդ աշխատանքները դրված չեն գյուղխորհուրդների վրա:

95. Շրջանային գործադիր կոմիտեներին կից կազմակերպվում են շրջանային հարկային հանձնաժողովներ հետևյալ կազմով՝

ա) նախագահ—շրջանային գործադիր կոմիտեյի նախագահ կամ նրա տեղակալը:

բ) շրջանային ֆինրաժնի վարիչ:

գ) շրջանային հողբաժնի վարիչ:

դ) ՄՏԿայանի քաղբաժնի ներկայացուցիչ:

յե) շրջալանի ներկայացուցիչ:

զ) շրջալսոֆխորհրդի ներկայացուցիչ:

ը) տնայնագործական կոոպերացիայի ներկայացուցիչ:

96. Շրջանային հարկահանձնաժողովների վրա դրված են հետևյալ պարտականությունները՝

ա) քննության առնել և շրջանային գործադիր կոմիտեյին ի հաստատություն ներկայացնել առանձին գյուղխորհուրդների համար սահմանված վճարողների կատեգորիաների հարկի կայուն դրույթները և յեկամտարերության նորմաները:

բ) քննել և հաստատել գյուղատնտեսական մթերքներ մասնավոր շուկայում գոյացած գներով վաճառող տնտեսությունների և վոչ գյուղատնտեսական յեկամուտներ ունեցողների ցուցակները և այդ աղբյուրներից ստացած յեկամուտի գումարները:

գ) քննել և լուծել հարկատուների գանգատները (նույն թվում և կոլտնտեսությունների գանգատները) և հանձնել շրջագործկոմին ի հաստատություն:

դ) քննել անհատական կարգով հարկվող տնտեսությունների ցուցակները և վորոշել նրանց յեկամուտները:

յե) քննել հարկատուներին վոչ գյուղատնտեսական զբաղմունքներից ստացված յեկամուտների գումարները և վերջնականապես վորոշել նույն տնտեսությունների հարկվող այդ յեկամուտի գումարները:

97. Շրջանային գործադիր կոմիտեների և գյուղխորհուրդների վրա (իսկ հարկ յեղած դեպքում քաղխորհուրդների վրա) և դրվում հարկի չափը վորոշելու համար տնհրաժեշտ տվյալների ձեշտ ու ժամանակի հաշվառման, հարկվող յեկամուտները և հարկը ձեշտ վորոշելու, հարկաթերթերը հանձնելու և հարկը լրիվ դանձելու պատասխանատվությունը:

98. Բոլոր հիմնարկությունները, կազմակերպությունները և ձեռնարկությունները (պետական կոոպերատիվ և մասնավոր), պարտավոր են շրջանային գործադիր կոմիտեներին և գյուղխորհուրդների պահանջով ներկայացնել հարկատուներին վճարած գումարների մասին տեղեկություններ:

99. Կոլեկտիվ տնտեսությունների գանգատները

գյուղհարկի վերաբերյալ տրվում են չրջանային ֆին-
բաժնին, վորը պարտավոր է յերեք որվա ընթացքում
հանձնել այդպիսիք իր յեղրակացության հետ միասին
չրջանային հարկհանձնաժողովին ի քննություն:

Շրջանային հարկհանձնաժողովների վորոշումների
դեմ բողոքները տրվում են ՀՍԽՀ-ի Ֆինսովետատին,
վորի վորոշումը վերջնական է:

100. Կոլտնտեսականների և մենատնտեսների բոլոր
գանգատները գյուղհարկի վերաբերյալ տրվում են
գյուղխորհուրդներին, վորոնք պարտավոր են անհապաղ
հանձնել այդպիսիք գյուղական հարկային հանձնաժո-
ղովներին ի քննություն:

Գյուղական հարկային հանձնաժողովների վորո-
շումների դեմ կարելի յե բողոքել չրջանային հարկային
հանձնաժողովներին, վորոնց վորոշումները վերջնական
են:

101. Դիմումներ և գանգատներ տալու համար սահ-
մանվում են հետևյալ ժամկետները:

ա) յեկամուտի աղբյուրների սխալ հաշվառման,
յեկամուտը և հարկը վորոշելու, ինչպես և արտոնու-
թյուններ ստանալու (բացի տարերային աղետների մա-
սին հարուցվող միջնորդություններից), դիմումները
տրվում են հարկաթերթերը վճարողին հանձնելուց հե-
տո 10 որվա ընթացքում:

բ) տարերային աղետների հետևանքով արտոնու-
թյունները ստանալու վերաբերյալ դիմումները տրվում
են հաշվառման սկզբից, յեթե աղետը տեղի յե ունեցել
հաշվառումից առաջ, իսկ մյուս դեպքերում աղետից
հետո 10 որվա ընթացքում:

102. Դիմումները և գանգատները պետք է քննու-
թյան առնվեն վոչ ուշ քան տրվելու որից 10 որվա ըն-
թացքում:

103. Դիմում և գանգատը տալը չի դադարեցնում
հարկի գանձումը: Այն դեպքերում, յերբ վորոշում է
կայացվում հարկատուի ոգտին, սխալ գանձված գու-
մարները պետք է վերադարձվեն 10 որվա ընթացքում:

ՀԱՏՎԱԾ 7-րդ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

104. Հարկ վճարողները հարկվող յեկամտի աղ-
բյուրները թագցնելու համար տուգանվում են վարչա-
կան կարգով, կամ յենթարկվում են դատական պա-
տասխանատվության:

Տուգանքը նշանակում է գյուղխորհուրդը: Թագցը-
նելու համար տուգանքի գումարը չպետք է լինի հարկի
կրկնապատկված գումարից ավելի:

Տուգանելու վերաբերյալ գյուղխորհրդի վորոշման
դեմ կարելի յե գանգատ տալ չրջանային գործադիր կո-
միտեյին, վորի վորոշումը վերջնական է:

105. Կոլտնտեսությունների հարկը վորոշելու հա-
մար անհրաժեշտ տեղեկությունները սխալ ներկայացնե-
լու դեպքում, մեղավոր անձինք տուգանվում են մինչև
25 ուրլի:

106. Սահմանված ժամկետներին հարկ չվճարողնե-
րի նկատմամբ կիրառվում են հարկային և վոչ հարկա-
յին յեկամուտների բռնագանձման կանոնադրությամբ
նախատեսված միջոցները:

Մասնավորապես հարկ չվճարողների դույքը վեր-
գրվում է և վաճառվում, իսկ ուշացնելու համար գանձ-
վում է տույժ հետևյալ չափերով՝

ա) կոլեկտիվ տնտեսություններից 0,1 տոկոս, բ)
աշխատավորական մենատնտեսներից և կոլտնտեսա-
կաններից 0,2 տոկոս և գ) կուլակային տնտեսություն-
ներից 1 տոկոս յուրաքանչյուր ուշացրած որվա հա-
մար:

ՀԱՏՎԱԾ 8-րդ

ԳԱՆՁԱԾ ՀԱՐԿԻ ԲԱԵԽՈՒՄԸ

107. Գյուղհարկի մուծված գումարները ամբողջու-
թյամբ հատկացվում են տեղական բյուջեյին հետևյալ
կարգով:

դ) քաղաքային հողերից գտնված հարկը ամբողջութեամբ հատկացվում է քաղաքի բյուջեին:

40

[illegible]

PHOTOGRAPH
MUSEUM
OF THE
UNITED STATES
OF AMERICA
WASHINGTON
D.C.

1
2

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Պետական Տպարան

Դավիթ 9229 (բ)

Տրամ 1200

ՀՀ Ազգային գրադարան



NL0203391

